ՀԱՆՐԱՅԻՆ
ՀԵՌՈՒՍՏԱԼԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք. Երևան «10» նոյեմբերի 2023թ.

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերության կողմից 2023 թվականի սեպտեմբերի 26-ին հայտարարված ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/22 ծածկագրով ***Տաղավարային սարքերի և պարագաների ձեռքբերման*** ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) հայտ ներկայացրած «ՅԵ ԷՍ ԹՐԵՅԴ» սահմանափակ պատասխանատվության ընկերությունը (այսուհետ՝ Մասնակից. ՀՎՀՀ՝ 00220229, գործունեության հասցե՝ ք. Երևան, Դավիթ Անհաղթ 6շ., բն. 700, հեռ. +374 99 200906, էլ. հասցե՝ yees.0022llc@gmail.com) խախտել է գնման ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորությունը, մասնավորապես՝ Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են եղել անհամապատասխանություններ.

- լրացված չի եղել գնման առարկայի ամբողջական նկարագիրը,
- բացակայում էր արտադրողի կողմից հավաստագիր նամակ MAF-ը,
- *Հավելված 1.3-ում ընկերության անվանումը սխալ էր գրված:*

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ սահմանված՝ «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 41-րդ կետով՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 2023 թվականի հոկտեմբերի 9-ի որոշմամբ նիստը կասեցրել է մեկ աշխատանքային օրով՝ Մասնակցին հնարավորություն տալով շտկել հայտնաբերված անհամապատասխանությունները, այդ մասին ծանուցելով Մասնակցին: Անհամապատասխանությունների շտկման վերջնաժամկետ է սահմանվել 2023 թվականի հոկտեմբերի 11-ին, ժամը 16:00-ն: Մասնակցի կողմից սահմանված ժամկետում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկվել են թերի, մասնավորապես՝ արտադրողի կողմից տրված հավաստագիր նամակ MAF-ը ներկայացված չէր պաշտոնական արտադրողի կողմից, ինչն ակնհայտ է դառնում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2023 թվականի հոկտեմբերի 12-ի Synology ընկերությանն ուղղված նամակին ի պատասխան ներկայացված պարզաբանումը, ըստ որի Synology ընկերության կողմից Մասնակցին հավասատագիր նամակ MAF չի տրվել, հետևաբար նշված փաստաթուղթը չի համապատասխանում Հրավերով սահմանված պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 2023 թվականի հոկտեմբերի 16-ի նիստում, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ սահմանված՝ «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 42-րդ կետը, որոշում է կայացրել Մասնակցի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Երևան, Նորք 0011
Գ. Հովսեփյան 26
հեռ.՝ +374 10 65 00 15
էլ. հասցե՝ support@armtv.com
www.1tv.am

ՀԱՆՐԱՅԻՆ
ՀԵՌՈՒՍՏԱԼԻԱՏՈՒԹՅՈՒՆ

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ Գնումների մասին օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի Ա ենթակետը (խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը):

ՈՐՈՇԵՑԻ

«ՅԵ ԷՍ ԹՐԵՅԴ» ՍՊԸ -ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

Առդիր՝ 1 (մեկ) փաթեթ:

Հարգանքով՝

Գործադիր տնօրեն **Հովհաննես Մովսիսյան**

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԼԻԱՏՈՒԹՅՈՒՆ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԼՈՒՍԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԼԻԱՏ